

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի
N 344-Ն, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի
N 346-Ն, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N
401-Ն ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N
350-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ 2021 թվականի N ____ - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 344-Ն, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2007 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 346-Ն, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N 401-Ն ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 350-Ն
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «է» կետով և 15-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի.
2. Ուժը կորցրած ճանաչել՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման կարգը հաստատելու մասին» N 344-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության փաստաթղթին (կտրոնին) ներկայացվող պահանջները և շրջանառության կարգը հաստատելու մասին» N 346-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 5-ի «Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության կայանների սարքավորումները մրցույթով ընտրված մատակարարող կազմակերպության միջոցով ձեռք բերելու մասին» N 401-Ն և «Հայաստանի Հանրապետությունում ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման և պարտադիր տեխնիկական զննության փաստաթղթին (կտրոնին) ներկայացվող պահանջները և շրջանառության կարգը հաստատելու մասին» N 350-Ն որոշումները:
3. 2022 թվականի հունիսի 1-ից տեխնիկական զննության կայաններում օգտագործվող՝ սույն կարգի Ցանկ N 3-ի 5-րդ և 8-րդ կետերով սահմանված տեխնիկական արատորոշման միջոցները պետք է հնարավորություն ունենան տվյալները փոխանցելու տեխնիկական զննության միասնական շտեմարանին:
4. Մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը, սույն կարգի Ցանկ N 2-ի՝ շարժիչը և դրա համակարգերը ստուգման աշխատանքների 1-ին և 2-րդ կետերով հայտնաբերված անսարքությունների դեպքում արատորոշման քարտում կատարվում է համապատասխան նշում, որի մասին տեղեկացվում է տրանսպորտային միջոցի տիրապետողին կամ սեփականատիրոջը անսարքությունը մինչև 2023 թվականի հունիսի 1-ը վերացնելու մասին:
5. Շրջանառության մեջ գտնվող տեխնիկական զննության այն կտրոնները, որոնք ձեռք բերողները տրանսպորտային միջոցները չեն ներկայացրել տեխնիկական զննության կայան համապատասխան ծառայություն ստանալու համար, կարող են ներկայացվել մինչև 2022 թվականի հունվարի 30-ը: Սույն դեպքերում կայանները կարող են կտրոնների հավելվածները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ համապատասխան ծառայությունների մատուցման դիմաց վճարում ստանալու համար:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում «Ճանապարհային երթևեկության

անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2021 թվականի հունվարի 20-ի ՀՕ- 58-Ն օրենքն ուժի մեջ մտնելու պահից:

Հավելված

ՀՀ կառավարության 2021 թվականի

-----ի ----ի N -----Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող և Հայաստանի Հանրապետության ոստիկանության «ճանապարհային ոստիկանություն» ծառայությունում (այսուհետ՝ ճանապարհային ոստիկանություն) հաշվառված, ինչպես նաև նոր ներմուծված և ճանապարհային ոստիկանությունում մշտական հաշվառման ենթակա տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման կարգը:
2. Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննությունը (այսուհետ՝ տեխնիկական զննություն) իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան լիցենզավորված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի արտադրական բազայում (այսուհետ՝ տեխնիկական զննության կայան)՝ տեխնիկական արատորոշման միջոցների օգտագործմամբ:
3. Տեխնիկական զննությունն իրականացվում է վճարովի հիմունքով՝ օրենսդրությամբ հաստատված սակագնով:

1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉՆՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4. Տեխնիկական զննության հիմնական խնդիրներն են՝

1) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտի նորմատիվ իրավական ակտերի, կանոնների, ստանդարտների և տեխնիկական նորմերի պահանջներին, ինչպես նաև վնասակար նյութերի մթնոլորտ արտանետման տեխնիկական նորմատիվներին տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և կահավորանքի համապատասխանության ապահովումը.

2) շահագործման մեջ գտնվող տրանսպորտային միջոցների կառուցվածքում ինքնակամ և երթևեկության անվտանգությանն սպառնացող փոփոխությունների կատարման կանխումը.

3) տեխնիկական զննության անցկացման արդյունքների մասին համապատասխան կառավարման մարմիններում տեղեկատվական բազայի վարումը՝ նրանց կողմից սահմանվող կարգով:

5. Տրանսպորտային միջոցները ենթակա են տեխնիկական զննության՝ օրենքով սահմանված պարբերականությամբ.

6. Տրանսպորտային միջոցը տեխնիկական զննության պետք է ներկայացվի մինչև նախորդ տեխնիկական զննությամբ տրամադրված արատորոշման քարտում նշված ամսվա վերջին օրը:

III. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

7. Տեխնիկական զննությունն անցկացնելու համար տրանսպորտային միջոցի տիրապետողը կամ սեփականատերը տեխնիկական զննության կայան է ներկայացնում տրանսպորտային միջոցը և հետևյալ փաստաթղթերը՝

1) տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը, իսկ նոր ներմուծված և ճանապարհային ոստիկանությունում մշտական հաշվառման ենթակա տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ՝ տրանսպորտային միջոցի մաքսային փաստաթղթերը.

2) փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման մասին տեղեկանքը (և/կամ վճարման անդորրագիրը): Նոր ներմուծված և ճանապարհային ոստիկանությունում մշտական հաշվառման ենթակա մեխանիկական տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ գույքահարկի պարտավորությունների կատարման մասին տեղեկանքը չի ներկայացվում.

3) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված բնապահպանական հարկի վճարման անդորրագիրը.

8. Տեխնիկական զննության անցկացման վճարումները կատարվում են

տեխնիկական զննության կայաններում տեղակայված վճարային տերմինալների, պետական վճարումների էլեկտրոնային համակարգի, ինչպես նաև բանկային կամ վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով:

1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉՆՆՈՒԹՅՈՒՆԸ

2. Տեխնիկական զննությունն իրականացվում է տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա ունեցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից՝ անկախ տրանսպորտային միջոցների հաշվառման վայրից:

10. Տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցի տեխնիկական զննությունը սկսվում է տրանսպորտային միջոցը հաշվառման վկայագրի տվյալների նույնականացումից հետո:

11. Տեխնիկական զննության կայաններում տեխնիկական արատորոշման միջոցների օգտագործմամբ և զննման միջոցով ստուգվում է տրանսպորտային միջոցների համապատասխանությունը սույն կարգի ցանկ N 1-ում նշված նորմատիվ իրավական ակտերի, կանոնների, ստանդարտների և տեխնիկական նորմերի պահանջներին (այսուհետ՝ ճանապարհային երթևեկության անվտանգության պահանջներ):
12. Տեխնիկական զննության կայաններում կատարվում են տրանսպորտային միջոցների՝ սույն կարգի ցանկ N 2-ում նշված հանգույցների ու համակարգերի տեխնիկական վիճակի ստուգման աշխատանքները:
13. Տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի ստուգման ժամանակ օգտագործվող տեխնիկական արատորոշման միջոցների ցանկը և դրանց հիմնական տեխնիկական բնութագրերը ներկայացված են սույն կարգի ցանկ N 3-ում:
14. Ճանապարհային երթևեկության անվտանգության պահանջներին և մնացած պարամետրերի անհամապատասխանության դեպքում արատորոշման քարտում կատարվում է համապատասխան նշում:
15. Ճանապարհային երթևեկության անվտանգության պահանջները չբավարարած և անսարք համարված տրանսպորտային միջոցի կրկնակի զննությունը տեխնիկական զննությունից հետո 20 օրվա ընթացքում իրականացվելու դեպքում տիրապետող կամ սեփականատերը համապատասխան արատորոշման քարտը ներկայացնում է նույն տեխնիկական զննության կայան, և տեխնիկական վիճակն ստուգվում է միայն այն ցուցանիշների գծով, որոնք հիմք են հանդիսացել նախորդ զննության ժամանակ արձանագրված անհամապատասխանությունների համար: Կրկնակի զննությունը իրականացվում է անվճար հիմունքներով:
16. Տեխնիկական զննության իրականացման գործընթացը տեսաձայնագրվում է, որի ձայնագրությունները կայանում պահպանվում են երեք տարի ժամկետով:

1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

- 17. Տեխնիկական վիճակի ստուգման արդյունքի հիման վրա էլեկտրոնային եղանակով ձևակերպվում է տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության արատորոշման քարտը (այսուհետ՝ արատորոշման քարտ)՝ համաձայն N 1 ձևի:
- 18. Արատորոշման քարտերը տեխնիկական զննության միասնական շտեմարանում պահպանվում են 10 տարի ժամկետով:
- 19. Արատորոշման քարտը տպվում է նաև թղթային եղանակով՝ մեկ օրինակից: Տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի հսկիչի և տրանսպորտային միջոցը տիրապետողի կամ սեփականատիրոջ կողմից ստորագրվելուց հետո հանձնվում է վերջինիս:
- 20. Արատորոշման քարտի գործողության ժամկետում տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ փոփոխության դեպքում տվյալ արատորոշման քարտը պահպանում է գործողության ժամկետը:

1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

- 21. Տեխնիկական զննության արդյունքում տեխնիկական զննության կայանները համապատասխան ծրագրային ապահովման միջոցով կատարում են տեխնիկական զննությունն անցած տրանսպորտային միջոցների տվյալների մուտքագրում:
- 22. Տրանսպորտային միջոցի արատորոշման քարտում նշված բոլոր տվյալները, կառուցվածքային ու հարմարադասման մեջ կատարված փոփոխությունների մասին լրացուցիչ տեղեկությունները գրանցվում են տեխնիկական զննության կայանների միասնական շտեմարանում:
- 23. Տեխնիկական զննության կայանների միասնական շտեմարանից կարող է օգտվել ճանապարհային ոստիկանությունը, իսկ լիազոր մարմնի թույլտվությամբ նաև այլ շահագրգիռ մարմիններ:

Ց Ա Ն Կ ՈՒ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՆ ՊԱՀԱՆՉՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ԿԱՆՈՆՆԵՐԻ, ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ

1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» N 955-Ն որոշում
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Կարմիր, կապույտ, դեղին (նարնջագույն), լուսնասպիտակ առկայծող փարոսիկներով կահավորման ենթակա տրանսպորտային միջոցների ցանկը հաստատելու մասին» N 2329-Ն որոշում
4. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հունիսի 16-ի «Ավտոտրանսպորտային միջոցների պետական գրանցման առանձնահատուկ համարանիշների և հատուկ ազդանշանների օգտագործումը կանոնակարգելու մասին» N 367 որոշում
5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի «Քաղաքացիներին և կազմակերպություններին պատկանող` ոստիկանության կողմից հատուկ հաշվառման ենթակա առարկաների, սարքավորումների և փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» N 1566-Ն որոշում
6. ՀՍՏ-185-2006 օպերատիվ ծառայությունների ավտոմեքենաներ, ավտոբուսներ և մոտոցիկլետներ. Գունագծապատկերներ, ճանաչման նշաններ, մակագրություններ, լուսային և ձայնային հատուկ ազդանշաններ. Ընդհանուր պահանջներ (հաստատված Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2006 թվականի հունիսի 29-ի N 146 հրամանով)
7. ՀՍՏ-110-2006 տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ. Տիպեր և հիմնական չափեր. Տեխնիկական պահանջներ և շահագործման վերաբերյալ ցուցումներ (հաստատված Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 12-ի N 246-Ա հրամանով)
8. «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 018/2011):

Ց Ա Ն Կ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱՏՈՒԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

NN Ազդեցատների, հանգույցների, համակարգերի

ը/կ և աշխատանքների անվանումները

Արգելակային համակարգ

1. Արգելակային ստենդի վրա փորձարկման ժամանակ տրանսպորտային միջոցի ա համակարգերի ստուգում, այդ թվում`

- 1) բանվորական արգելակային համակարգի տեսակարար արգելակման ուժերի ու
- 2) անիվների արգելակային ուժերի անհավասարաչափության գործակցի որոշում
- 3) կայանման արգելակային համակարգի տեսակարար արգելակման ուժի որոշում
- 4) բանվորական արգելակային համակարգի գործարկման ժամանակի որոշում
- 5) օժանդակ արգելակային համակարգի աշխատունակության ստուգում

2. Արգելակային համակարգի տարրերի տեխնիկական վիճակի ստուգում

Ղեկային կառավարում

1. Ղեկանիվի առավելագույն շրջադարձի անկյան և ղեկային վարման գումարային ի մեծության չափում
2. Ղեկային կառավարման դետալների փոխադարձ տեղաշարժի և խաղի առկայություն պարուրակային միացությունների սևեռման հոսաալիության ստուգում
3. Ղեկային կառավարման ուժեղարարի տեխնիկական վիճակի և աշխատունակության ստուգում
4. Ղեկային կառավարման տարրերի տեխնիկական վիճակի և ամրակապման ստուգում

Արտաքին լուսավորման սարքեր

1. Ներկայացվող պահանջներին արտաքին լուսավորման սարքերի քանակի, տեսակի, դասավորության, վիճակի և գույնի համապատասխանության ու սահմանված ռեգլամենտացիայի աշխատունակության ստուգում

այդ թվում`

- 1) հեռահար և մոտակա լույսի լապտերների
- 2) առջևի և հետևի հակամառախուղային լապտերների
- 3) արգելակման ազդանշանների
- 4) եզրաչափային լույսերի
- 5) շրջադարձի ցուցիչների և վթարային ազդարարիչների
- 6) հետընթացի լույսերի

7) գրանցման համարանիշի լուսավորման լապտերիկի

8) լուսային անդրադարձիչների

9) ավտոգնացքի նշանների

10) հեռահար և մոտակա լույսի լապտերների ու հակամառախուղային լապտերների ստուգում

Հողմապակու ապակեմաքրիչներ և ապակեվացներ

1. Հողմապակու ապակեմաքրիչների և ողողիչների վիճակի և սահմանված ռեժիմում աշխատունակության ստուգում

այդ թվում՝

1) ապակեմաքրիչների

2) ապակեվացների

Անիվներ և դողեր

1. Դողերի մակնիշավորմանը և տրանսպորտային միջոցի կառուցվածքին, չափին և բեռնվածքին դրանց համապատասխանության ու տեխնիկական վիճակի ստուգում

այդ թվում՝

1) պահպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրության

2) դողերի վնասվածքի առկայության

3) անիվների տեղակայման

3) անվահեծերի և սկավառակների ամրակապման ու վիճակի

Շարժիչը և դրա համակարգերը

1. Բենզինային և գազաբալոնային շարժիչի բանաձև գազերում վնասակար նյութերի օքսիդի՝ CO, ածխածնի դիօքսիդի՝ CO₂ և ածխաջրածինների՝ CH) պարունակության ստուգում

2. Դիզելային շարժիչի ծխայնության ստուգում

3. Մնման համակարգի սարքերի և խողովակաշարերի հերմետիկության ստուգում

4. Մեխանիկական ծակվածքների ու անկիպությունների առկայության ստուգում

Կառուցվածքի այլ տարրեր

1. Տրանսպորտային միջոցի և դրա ագրեգատների մականշվածքների համապատասխանությունը հաշվառման վկայագրի տվյալներին և դրանց փոփոխության առկայությունը

2. Հետին տեսանելիության հայելիների առկայության, դրանց վիճակի և ամրակապ
3. Ապակիների վիճակի (տեսանելիության), վարորդի նստատեղից տեսանելիությունը սահմանափակող լրացուցիչ իրերի առկայության ստուգում
4. Կախոցքի և կարդանային փոխանցման տարրերի տեխնիկական վիճակի և ամրակապ ստուգում
5. Վարորդի և ուղևորների նստարանների կարգավորման մեխանիզմի տեխնիկական ամրակապման ստուգում
6. Ավտոբուսների սրահներից վթարային ելքերի աշխատունակության, դրանց ցուցիչ օգտագործման կարգի վերաբերյալ ցուցումների առկայության ստուգում
7. Ապակիների տաքացման և փչահարման սարքերի աշխատունակության ստուգում
8. Բժշկական դեղատուփի, կրակմարիչի, վթարային կանգառի նշանի առկայության ստուգում
9. Անվտանգության գոտիների առկայության և աշխատունակության ստուգում
10. Ձայնային ազդանշանի ձայնային ուժի ստուգում
11. Արագաչափի և պտույտաչափի աշխատունակության ստուգում

Այլ աշխատանքներ

1. Տրանսպորտային միջոցի կառուցվածքում փոփոխությունների առկայության և դրանց վերաբերյալ համապատասխան մարմինների թույլտվության կամ համաձայնության առկայության ստուգում
2. Մասնագիտացված տրանսպորտային միջոցների մոտ բեռի ամրացման հարմար հատուկ թափքերի, ցիստեռների և այլ սարքավորումների տեխնիկական վիճակի աշխատունակության և հուսալիության ստուգում

Ց Ա Ն Կ Ն Յ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԴՐԱՆՑ ՎԻՃԱԿԻ ԱՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՐԱՏՈՐՈՇՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

<p>NN</p> <p>ը/կ</p>	<p>Սարքավորման տեսակը</p> <p>1</p> <p>2</p> <p>Արգելակային համակարգի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցները</p> <p>1. Ստենդ՝ թեթև մարդատար ավտոմոբիլների, միկրոավտոբուսների և փոքրատոննաժ բեռնատար ավտոմոբիլների արգելակային</p>	<p>Տեխնիկական բնութագիրը Վերահսկվող (ստուգվող) պարամետրերը</p> <p>3</p> <p>արգելակման ուժերը</p>	<p>Չափման սահմանը</p> <p>4</p> <p>0-6.0 կՆ</p>
----------------------	--	---	---

	համակարգի ստուգման համար	կառավարման օրգանի վրա գործադրվող ուժը	300-700 Ն
		արգելակային համակարգի գործարկման ժամանակը	0.4-2.0 վ
		տրանսպորտային միջոցի զանգվածը	600-4000 կ
2.	Ունիվերսալ ստենդ՝ թեթև մարդատար և բեռնատար ավտոմոբիլների ու ավտոբուսների արգելակային համակարգի ստուգման համար	կառավարման օրգանի վրա գործադրվող ուժը	0-40 կՆ
		արգելակային համակարգի գործարկման ժամանակը	300-700 Ն
		տրանսպորտային միջոցի զանգվածը	0.4-2.0 վ
		տրանսպորտային միջոցի զանգվածը	600-13000
Ղեկային վարման համակարգի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցներ			
3.	Սարք՝ ղեկային վարման գումարային խաղի չափման համար (35 կգ/Նժ)	ղեկանիվի շրջադարձի անկյունը	մինչև 25 աստիճան
		ճիգը՝ ղեկանիվի շրջադարձի ժամանակ	մինչև 35 Ն
4.	Ձողակարկին	գծային չափերի չափում	0.5-100 մմ
Արտաքին լուսավորման սարքերի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցներ			
5.	Սարք՝ արտաքին լուսային սարքերի լույսի ստուգման համար	լուսաստվերային սահման պարունակող հարթության թեքվածքը	30'-150'
		լուսային փնջի առանցքի հորիզոնական շեղումը	մինչև 5
		հաշվանցման առանցքից	
Անիվների և դողերի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցները			
6.	Դողերի ճնշաչափերի հավաքածու	սեղմված օդի ճնշումը	մինչև 1 ՄՊ կգ/սմ ²)
7.	Դողի պահպանաշերտի նախշերի խորության չափիչ	պահպանաշերտի նախշերի մնացորդային բարձրությունը	0.5-3.0 մմ
Շարժիչի և դրա համակարգերի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցները			
8.	Գազաանալիզատոր (սարք՝ կայծային բռնկմամբ շարժիչներով (բենզինային, գազային) ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների մակարդակների չափման համար)	ածխածնի օքսիդի (CO) պարունակությունը	մինչև 5 %
		ածխաջրածինների (CH) պարունակությունը	500-4000 մ
		ծնկածև լիսեռի պտտման հաճախությունը	500-3500 ր
9.	Ծխաչափ (սարք՝ դիզելային շարժիչով ավտոտրանսպորտային միջոցների ծխայնության (դիսպերս մասնիկների) չափման համար կամ ունիվերսալ չափիչ սարք՝ կայծային բռնկմամբ շարժիչներով (բենզինային, գազային) և դիզելային շարժիչներով ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների մակարդակներ չափելու համար (օգտագործվում է սույն ցանկի 11-րդ կետում նշված	լուսային հոսքի թուլացման իրական ցուցանիշը	0.2-2 մ ⁻¹

գազաանալիզատորի և 12-րդ կետում նշված ծխաչափի փոխարեն)	լուսային հոսքի թուլացման գործակիցը ծնկածև լիսեռի պտտման հաճախությունը տվյալները համապատասխանաբար՝ ըստ սույն ցանկի 8-րդ և 9-րդ կետերի	5-80 % 500-8000 ր համապատասխանաբար ըստ սույն ցանկի 8-րդ և 9-րդ կետերի մինչև 20 %
10. Հոսատրոնիչ՝ տրանսպորտային միջոցի սնման գազային համակարգի հերմետիկության ստուգման համար	օդում պրոպանի (մեթանի, հեքսանի և այլնի) պարունակությունը	

Տրանսպորտային միջոցի կառուցվածքի այլ տարրերի տեխնիկական

արատորոշման պարտադիր միջոցները

11. Ստենդ՝ տրանսպորտային միջոցների ղեկային վարման շարժաբերի և կախոցքի վիճակի ստուգման համար	երկու փոխուղղահայաց ուղղություններով հարթակների տեղաշարժը հարթակների տեղաշարժի առավելագույն ճիգը. ոչ պակաս՝ թեթև մարդատար ավտոմոբիլների համար բեռնատար ավտոմոբիլների և ավտոբուսների համար	100 մմ 11 ԿՆ 30 ԿՆ
---	--	--------------------------

Պարտադիր գարաժային սարքավորումներ

12. Կոմպրեսոր՝ մանոմետրով, ծայրակալով	արտադրողականությունը վերջնական ճնշումը	1 մ ³ /րոպե մինչև 1 ՄՊ կգ/սմ ²)
13. Ավտոմեխանիկի գործիքների հավաքակազմ	-	-

Ձև N 1

-

-

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱՐԱՏՈՐՈՇՄԱՆ ՔԱՐՏ

Տեխնիկական զննության կայանի անվանումը _____

Գտնվելու վայրը _____

Տեխնիկական զննության ամսաթիվը _____ 20 թ. Հաջորդ S2 _____

Տեխնիկական զննության փուլը՝ սկզբնական (կրկնակի) (ընդգծել)

Տնօրինող _____, Հաշվառման հասցե՝ _____,

Մակնիշը _____, թողարկման տարեթիվը _____

Համարանիշը _____, Նույնականացման (VIN) համարը _____

Հաշվառման վկայագիրը (սերիան, համարը) _____

**Արգելակային
համակարգ**

Բանվոր. արգելակ.

Անիվների արգելակ.

Կայան.արգելակ.

տես. արգելակ.

ուժերի անհավ.

Բանվոր. արգելակ.

ուժը 101

102

գործարկման ժամ.

Օժանդակ արգելակ.
համակարգ

Արգելակ. տարրերի

վիճակը

105

104

Ղեկային կառավարում

Ղեկանիվի գումարային
խաղը 201

Դետալների տեղաշարժ
խաղ, սևեռում 202

Ղեկային

ուժեղարս

Ղեկային կառավար.

տարրերի վիճակը 204
**Արտաքին լուսավորման
սարքեր**

Հեռահար, մոտակա
լույսի լապտերներ 301

Հակամառախուղ.
լապտերներ 302

Արգելակմ

Եզրաչափային

Շրջադարձի ցուցիչ
վթար. ազդար. 305

Հետընթացի լույսեր

ազդանշա

Համարան

լապտեր 3

լույսեր 304

Ավտոզնացքի նշաններ
309

Հեռահար, մոտակա
լույսի լապտերների ուժի
ստուգում 310

306

դարձիչներ 308

Ապակեմաքրիչներ

Ապակեվիացններ

**Հողմապակու
մաքրիչներ, վիացններ**

401

402

Անիվներ և դողեր

Պահպանաշերտի
նախշանկար 501

Դողերի վնասվածք 502 Դողերի տ

Անվաճեծեր և սկավառակներ Շարժիչը և դրա համակարգերը	504	CO-ի և CH-ի պարունակությունը	601	Դիզել. շարժիչի ծխայնությունը	602	Սնման հա
Արտաձման համակարգը Կառուցվածքի այլ տարրեր	604	Տրանսպորտ. միջոց. մակնիշավորում	701	Հետին տեսանելիության հայելիներ	702	Ապակինե թափանցի
Կախոցքի, կարդան. փոխանց. տարրեր	704	Վարորդի նստարանի մեխանիզմ	705	Վթարային ելքը	706	Ապակե տ փչահար ս
Դեղատուփ, կրակմարիչ, կանգառի նշան	708	Անվտանգության գոտիներ	709	Ձայնային ազդանշանը	710	Վազքաչա տաչափ, ս
Այլ աշխատանքներ		Կառուցվածքի փոփոխություն	801	Մասնագիտացված տրանսպորտ	802	

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏՈՒԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՍԱԲՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱ ԼՐԱՅՈՒՅԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տրանսպորտային միջոցի տեխնիկական _____
վիճակի հսկիչ (ստորագրությունը) _____ (անունը, ս

Կ.Տ. _____
Տրանսպորտային միջոցը տնօրինող _____
(ստորագրությունը) _____ (անունը, ազգ

